Վերապատրաստող կազմակերպություն

Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՀՀ արտաքին քաղաքական կողմնորոշումն ու քաղաքակրթական առանձնահատկությունները

Առարկա-պատմություն

Դպրոց Սիզավետի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ՝ Շահինյան Արմեն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ առաջին : Հայաստանի եվրոպական կողմնորոշման խնդիրը ------5

Գլուխ երկրորդ : Հայաստանի արտաքին քաղաքական Եվրոպական հեռանկարները----------11

Եզրակացություն- ----------13

Օգտագործված գրականության ցանկ ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ փլուզումից հետո, ըստ Ս. Հանթինգթոնի, փոխվում է նախկինում երկբևեռ աշխարհի պատկերը, որն այժմ դառնում է բազմաբևեռ. «Ժողովուրդներն ու ազգությունները փորձում են պատասխանել այն պարզագույն հարցին, որին կարող է բախվել մարդը «Ով ենք մենք»: Եվ նրանք պատասխանում են ավանդական կերպով դիմելով իրենց համար առավել կարևոր հասկացություններին: Մարդիկ բնորոշում են իրենց՝ կիրառելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ծագումը, կրոնը, լեզուն, պատմությունը, արժեքները, սովորույթներն ու հասարակական ինստիտուտները: Եվ ամենամեծ մշակութային խմբերը, որոնց հետ նրանք իրենց նույնացնում են, ըստ Ս. Հանթինգթոնի, քաղաքակրթություններն են. «Ողջ պատմության ընթացքում քաղաքակրթությունները մարդկանց տրամադրել են ինքնանույնացման բարձրագույն աստիճան:

1990-ականների հայկական փորձառությունը՝ հայկական ինքնությունը վերագտնելու ձգտումներով, ներքաղաքական ու արտաքին քաղաքական թնջուկներով, ներդասելի է քաղաքագետի նշած համաշխարհային զարգացումներում: Քաղաքական ուղեգծեր հստակեցնելիս նորանկախ պետության հիմնավորումները հաճախ ոչ միայն քաղաքական-տնտեսական են, այլև մշակութային շերտեր են շոշափում: «Պատմական հիշողության և, համապատասխանաբար, մշակույթի ժառանգորդման անընդհատականության որոնումը խիստ որոշակի է ինքնության հարցը քննարկող մամուլի հրապարակումներում: Որպես սեփական պատմության ու ինքնության կորսված հատվածներ՝մամուլը վկայակոչում է պատմական ժամանակի տարբեր փուլերում խաղացած կարևորդերերը և քաղաքակրթական առնչությունները: Որպես անցյալի և ինքնության բնութագիր՝ հիշատակվում են հատկապես Եվրոպական քաղաքակրթության հետ ունեցած առնչություններն, ավելին՝ Հայկական քաղաքակրթությունը մեկնաբանվում է իբրև Եվրոպականի մաս: Ըստ այսմ՝ եվրոպական կողմնորոշման ընթացքը կարելի է տեսնել ոչ միայնՀայաստան-Եվրամիություն առնչությունների մասին պատմող ձեռնարկներում, այլև այդտարիների մամուլում: ՀՀ և Եվրամիության միջև «Գործընկերության և համագործակցության պայմանագիրը »ստորագրվել է 1999 թ., սակայն մինչ այդ էլ Եվրոպան և եվրոպական պետությունները շարունակաբար վկայակոչվել են իբրև

պետություն կառուցելու մոդել՝առավելապես քաղաքակրթական ընդհանրությունների շեշտադրրմամբ:

Նորանկախ հանրապետության առաջին դիվանագիտական քայլերից մեկը եղել է 1991 թ. հոկտեմբերի 9-ին Եվրոպական խորհրդին անդամակցելու դիմումը, որ ՀՀառաջին արտգործնախարար Ր. Հովհաննիսյանը հիմնավորել է իբրև տուն վերադառնալու հնարավորություն:Մամուլը ժամանակաշրջանի մասին կարևոր վկայություններ է պարունակում՝ արձանագրելով այն, ինչ օրախնդիր էր, և այն, ինչ կարողենք տեսնել այսօր՝ իբրև ետընթերցում:Մեր հետազոտական աշխատանքը նպատակ ունի անդրադառնալ 90-ականների առաջին կեսին նորանկախ պետության մամուլում եվրոպական քաղաքակրթության հետ հայկական քաղաքակրթությունն առնչելու փորձերին:

Հայաստանի եվրոպական կողմնորոշման թեման արդիական է և ունի գործնական նշանակություն:

Գլուխ առաջին: Հայաստանի եվրոպական կողմնորոշման խնդիրը

Իսկ ինչ են իրենցից ներկայացնում արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունները, որն է սրանց միջև ջրբաժանն ու տարբերակիչ հատկանիշները: Որպես նման տարանջատման հիմք ծառայել են ոչ միայն աշխարհագրական դետերմինանտներն ու ժողովուրդների զբաղեցրած արեալները, այլև այդ ժողովուրդների՝ միմյանցից տարբերվող մենթալիտետները, այսինքն՝ աշխարհի ու գիտական, կրոնական, գեղարվեստական, էսթետիկ ու հոգևոր արժեքների ճանաչողության առանձնահատկությունները, աշխարհայացքների, հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կառուցվածքի յուրահատկությունները: Արևմտյան մենթալիտետը հակված է առավել դինամիկ կենսակերպին, գիտատեխնիկական առաջընթացին, հասարակության ու մշակույթի կատարելագործմանը, մարդկային գործունեության բոլոր ոլորտների մշտական զարգացմանը: Անհատի կարևորության գաղափարը, նրա ստեղծագործական զարգացումն ընկած են արևմտյան հասարակության հիմքում: Անցումը հնից դեպի նորը ընկալվում է որպես հնացած արժեքների, սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի վերափոխում, քանի որ դրանից է կախված հասարակության հետագա առաջընթացը: Արևելյան մտածողությանն ու կենցաղավարությանն առավել բնորոշ են կրոնական ու բարոյական ավանդույթների ու նորմերի առաջնայնությունը, հակառակ արևմուտքում առկա ռիթմիկ կենսակերպին ու անընդհատ փոփոխվող ու կատարելագործվող հասարակական հարաբերություններին՝ կոնսերվատիզմը, ընդունված վարքագծի նորմերի խիստ պահպանումը, պասիվությունը, հարգանքն ու լոյալությունը ավանդույթների ու սովորույթների հանդեպ: Ի տարբերություն արևմտյան անհատակենտրոնությանը՝ արևելյան մենթալիտետին բնութագրական է մարդու ընկալումը որպես հավաքականության ներկայացուցիչ, ում գլխավոր խնդիրը ընդհանուրին ծառայելն է:

Ըստ էության՝ արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունները միմյանց չեն բացառում՝ չնայած դրանցում առկա հակադիր երևույթներին, քանի որ երկուսն էլ

մարդկային քաղաքակրթության տարբեր դրսևորումներ են՝ հասարակական կազմակերպման ուրույն համակարգերով ու սկզբունքներով: Արևմուտքում առկա անընդհատ փոփոխվող ու առաջ գնացող կենսակերպը, մարդկային գործունեության սկզբունքների ու նորմերի պերմանենտ էվոլյուցիան հանգեցրեց առավել ճկուն ու ֆունկցիոնալ հասարակական համակարգի հաստատմանը, ինչը արժեքային-գաղափարական ու գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ արևմտյան հասարակություններին հասցրեց քաղաքակրթական զարգացման ավելի բարձր մակարդակի: Ի հակադրություն դրան՝ արևելքում արմատացած իներտությունը, արժեքային ու նորմատիվ կայունությունը, ինչպես նաև մարդու՝ որպես առանձին սուբյեկտի ընկալման բացակայությունը հանգեցրին բավականին հիերարխիկացված ու ավանդական հասարակությունների ձևավորմանը, որոնք հասարակական կյանքի առաջընթացով էապես հետ են մնում: Արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունների համառոտ նկարագիրը տալուց հետո փորձենք հասկանալ՝ արդյոք հայերը պատկանու՞մ են նշված քաղաքակրթություններից որևիցե մեկին, թե՞ ոչ: Այժմ արդեն փորձենք անդրադառնալ ՀՀ արտաքին քաղաքական կողմնորոշման խնդիրներին՝ ներկայացված պատմական փաստերն ու եզրահանգումները հիմք ընդունելով: Անկախացումից հետո մեր առջև դրված կարևորագույն խնդիրը եղել և շարունակում է մնալ հասարակության արդիականացումն ու արդար, բարեկեցիկ, ժողովրդավարական պետության ստեղծումը: Թե ինչու ենք մենք ու, մասնավորապես, իշխանությունները ձախողել սրա իրականացումը՝ երկար կարելի է խոսել, ինչը սույն վերլուծության համար նախատեսված չէ: Հայաստանը անկախացման ուղին բռնել է որպես հետխորհրդային պետություն, և որքան էլ խոսենք արևմուտքի հետ հաստատված հարաբերություններից ու համագործակցության հեռանկարներից, միևնույն է, արտաքին հարաբերություններում ի սկզբանե առաջնային վեկտորն ուղղվել է դեպի Ռուսաստան: Սրա ցայտուն վկայությունը 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրն է, որը մեծապես կանխորոշեց երկկողմ հարաբերությունների ու ՀՀ արտաքին քաղաքական կուրսի՝ մեզ համար անբարենպաստ ապագան: 2000-ականների սկզբներից, երբ Ռուսաստանում Վ.Պուտինի իշխանության գալուց հետո խնդիր

դրվեց վերականգնելու երկրի դերն ու կշիռը աշխարհաքաղաքական գործընթացներում ու վերափոխել առկա միաբևեռ աշխարհակարգը՝ սկսվեց հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության մեծացման հետևողական մի գործընթաց, որն իր պտուղները սկսեց տալ արդեն մի քանի տարի անց: Լինելով նախկին ԽՍՀՄ լոկոմոտիվ պետությունը՝ Ռուսաստանը փորձում է վերականգնել իր ազդեցությունը հետխորհրդային պետությունների վրա սրանց իր ազդեցության գոտում պահելու ու իր աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու համար: Խորհրդային միության փլուզումը ուղեկցվեց դրանում առկա բազմաթիվ տարածքային ու էթնիկ սառեցված հակամարտությունների բռնկմամբ, քանի որ միությունը կազմավորվել էր բռնակցման ճանապարհով, և դրա մաս կազմող հանրապետությունների սահմանները գծելիս էթնիկական ու տարածքային պատկանելության շատ բաղադրիչներ անտեսվել էին կամայականորեն: Ռուսաստանը հետխորհրդային տարածաշրջանում իր ազդեցությունը պահպանելու համար որպես գործուն լծակ օգտագործում է հենց այդ առկա սառեցված հակամարտությունները՝ ըստ իրադրության դրանց սառեցման ու էսկալացման միջոցով մշտական ճնշում գործադրելով այդ պետությունների վրա ու նրանց իր քաղաքական ուղեծրում պահելով: Եվ քանի որ Ռուսաստանը այս տարածաշրջանում շատ ավելի մեծ կշիռ ունի, քան արևմուտքը, ապա նրա հետ հաշվի չնստելը ու ինքնաբավ քաղաքականություն վարելը փաստացի հնարավոր չէ: Եթե այս ամենը տեղայնացնենք ՀՀ-ի վրա, ապա ակնհայտ է դառնում, որ ղարաբաղյան հակամարտության սառեցման ու պարբերական էսկալացմամբ ուժային կենտրոններից շահագրգիռ է մեծապես Ռուսաստանը, քանի որ թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի համար կարևոր այս խնդիրը նման կերպ օգտագործելով ու դրա վրա մեծ ազդեցություն գործելով՝ Ռուսաստանը կաշկանդում է մասնավորապես Հայաստանին իր վարած արտաքին քաղաքականության մեջ՝ անվտանգության սպառնալիքներից ելնելով: Ակնհայտ է այն փաստը, որ երբ պետությունը չունի բավարար տնտեսական, սոցիալական, ռազմական պոտենցիալ, չի կարող վարել ինքնաբավ արտաքին քաղաքականություն և ստիպված է իր պաշտպանական ու անվտանգության խնդիրները լուծելու համար հարել այս կամ այն ուժային բևեռի աջակցությանը: Հաշվի առնելով թե՛ ղարաբաղյան հակամարտության

առկայությունը, թե՛ փակ սահմաններն ու ոչ բարյացկամ հարևանների առկայությունը և թե՛ բազմաթիվ ներքին սոցիալական ու տնտեսական սպառնալիքներ՝ հանգում ենք եզրակացության, որ Հայաստանը ներկայումս կաշկանդված է իր արտաքին քաղաքական օրակարգը ինքնուրույն սահմանելիս: Սակայն մի կողմից մենք չենք կարող ցանկության դեպքում պոկվել Ռուսաստանից և գնալ արևմուտքի հետ սերտ համագործակցության բոլոր ոլորտներում, և մյուս կողմից՝ չի կարելի հայտնվել Ռուսաստանի տոտալ վերահսկողության ներքո, ինչը բազմապիսի սպառնալիքներ է իրենից ենթադրում: Լինելով թե արևմտյան, և թե արևելյան քաղաքակրթությունների կրող, կարող ենք գնալ պետության կառուցման արևմտյան մոդելով, քանի որ եթե արևմտյան (եվրոպական) արժեքներ ասելով հասկանում ենք ժողովրդավարությունը, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, սոցիալական արդարությունը, հասարակության բարեկեցությունը և այլն, ապա սրանց կայացումը հնարավոր է այնքանով, որքանով որ սրանք մեզ խորթ արժեքներ չեն: Անկախացումից հետո հասարակության մեջ առկա սոցիալ-քաղաքական մշակույթը, հանրային մենթալիտետի որոշ կարևոր տարրեր անհրաժեշտ բարեփոխման չենթարկվեցին, և նման պայմաններում վերոնշյալ առաջընթացն ապահովելը պրակտիկորեն հնարավոր չէր: Տեսական մակարդակում ցանկանում ենք ունենալ եվրոպական տիպի պետություն, ունենալ բարեկեցիկ ու արդար հասարակություն, սակայն կենցաղավարության մեջ շարունակում ենք առաջնորդվել այն արմատացած կարծրատիպերով ու սովորույթներով, որոնք մեր պատկերացրած արժեքների հաստատմանը տրամագծորեն հակառակ են, և արդյունքում հայտնվում ենք տեղապտույտի մեջ ու չենք կողմնորոշվում ո՛չ մեր ցանկությունների հստակեցման, և ո՛չ էլ պրակտիկայի վերափոխման հարցում: Եթե խնդիրը դիտարկում ենք ԵՄ-ի հետ ասոցացման համապատասխան համաձայնագրերի ստորագրման ու այդ կերպ եվրոպական ինտեգրմանը գնալու տեսանկյունից, ապա ամեն բան այստեղ հարթ չէ ոչ միայն տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրադրության ու Ռուսաստանի հետ հարաբերությունների առումով, այլև առավել սոցիալ-մշակութային կտրվածքով: Եվրոպական արժեքներ կոչվածը ինքնին արհեստական ու թյուրընկալվող հասկացություն է, քանի որ շատերը դրա տակ հասկանում են

սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, միասեռական ամուսնությունների օրինականացումը ու հայ հասարակության մենթալիտետին ու արժեքներին հակասող նմանատիպ այլ երևույթներ: Մեր խորին համոզմամբ՝ մենք, լինելով ավանդական հասարակություն ու ամուր կրելով մեր արմատացած մի շարք ավանդույթներ ու արժեքներ, պատրաստ չենք հասարակությանը վերափոխել այն աստիճանի, որ նշված խորթ համարվող երևույթները նորմալ ընկալվեն մարդկանց կողմից: Ընդ որում՝ դա անհրաժեշտ չէ այնքանով, որքանով որ հնարավոր է այդ երևույթների նկատմամբ մարդկանց վերաբերմունքը հասցնել հանդուրժողականության մակարդակի՝ սակայն միաժամանակ նաև դրանք չվերածելով բնականոն ու համընդհանուր աջակցության և խրախուսման արժանացող երևույթների՝ իբրև մարդկանց անօտարելի իրավունքների ու ազատությունների դրսևորում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեզնում առկա են շատ էլեմենտներ թե՛ արևմտյան ու թե՛ արևելյան արժեհամակարգերից, անհրաժեշտ է մշակել պետության ու հասարակության կառուցման ուրույն մի մոդել, որը չպետք է տիպիկ ձևով կրկնօրինակի արևմտյանը կամ արևելյանը: Պետք է կարողանանք արևմուտքից վերցնել այն, ինչն իրոք անհրաժեշտ է մեզանում սոցիալական, տնտեսական ու քաղաքական լուրջ մարտահրավերները լուծելու համար, բայց միաժամանակ մենք պետք է կարողանանք պահպանել նաև մեր ավանդապաշտության որոշ կարևոր էլեմենտներ, քանի որ ավանդապաշտությունն ինքնին դեռ չի հակասում հասարակական էվոլյուցիային:

Արդի միջազգային հարաբերություններում շատ հաճախ աշխարհագրական դիրքից, տարածաշրջանային քաղաքական իրադրությունից և այլ գործոններից ելնելով՝ պետությունները պարտադրված ընտրություն են կատարում արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում: Առկա օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրողությունները ստիպում են առաջնորդվել ոչ թե արժեհամակարգային, սոցիալ-մշակութային և այլ բնույթի նախընտրություններով, այլ առկա քաղաքական իրադրությունն ու մարտահրավերները հաշվի առնելով՝ ցանկալիի ու հնարավորի միջև խիստ հակասություն է ի հայտ գալիս: Դիցուք՝ Հայաստանը կարող է սոցիալ-քաղաքական, տնտեսական, արժեքային վերափոխման հրամայականից ելնելով՝ ձգտել ինտեգրվել

եվրոպական ընտանիքին, սակայն տարածաշրջանային ռազմաքաղաքական մարտահրավերները, Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունների բնույթն ու դրա հետ շաղկապված այլ խնդիրներ Հայաստանին, միևնույն է, պահում են Ռուսաստանի քաղաքական ուղեծրում: Գալով այն եզրահանգմանը, որ Հայաստանը մի շարք պատճառներով չի կարող ինքնաբավ արտաքին քաղաքականություն վարել, բայց և դրա հետևանքով չպետք է ընկնել Ռուսաստանի տոտալ վերահսկողության ներքո ու զրկվել սուվերենության իրացման ու ինքնուրույն արտաքին քաղաքական որոշումներ կայացնելու իրավունքից. Հայաստանը պետք է կարողանա հավասարակշռություն պահել երկու ուժային կենտրոնների միջև՝ համակցելով ու խորացնելով համագործակցությունը թե Արևմուտքի, և թե եվրասիական տարածաշրջանի խաղացողների հետ: Սրան հնարավոր է հասնել միայն այն պարագայում, երբ Հայաստանը կարողանա հատկապես Ռուսաստանի հետ հարաբերություններում պահպանել այն գիծը, որտեղ արդեն ռուսական հավակնությունները հատվում են մեր ազգային ու պետական շահերի հետ: Կովկասյան տարածաշրջանում Հայաստանը չափազանց կարևոր ռազմավարական նշանակություն ունի Ռուսաստանի համար, ուստի այդ հանգամանքը պետք է հնարավորին չափ օգտագործվի երկկողմ հարաբերություններում որոշակի հավասարակշռություն պահպանելու համար, իսկ Ռուսաստանը չդիտարկվի Հայաստանի ու հայ ժողովրդի գոյության գրավական ու երաշխավոր:

Գլուխ երկրորդ ։ Հայաստանի արտաքին քաղաքական Եվրոպական հեռանկարները

Եվրոպական դիսկուրսների ներբերումը ետխորհրդային հայկական իրականություն մամուլի միջոցով պայմանականորեն կարելի է բաշխել ըստ ոլորտների՝ քաղաքական,տնտեսական, բարոյական, ինստիտուցիոնալ, մշակութային և այլն: Դա իրականանում էմասնավորապես որպես նոր եզրաբանություն այդ տարբեր ոլորտներում: Եթե քաղաքական նոր մուտքերը գերազանցապես բնորոշվում են ժողովրդավարություն եզրով,տնտեսականը՝ ազատ շուկա, սեփականաշնորհում և այլն, ապա մշակույթի դեպքում դրանք կարելի է անվանել 20-րդ դարի արևմտյան արվեստ և գրականություն: Ընդ որում մուտքերի հանդեպ զգուշավորությունն այստեղ առանձնանում է նաև սեփականհին մշակույթի շեշտադրմամբ: Հաճախ քաղաքակրթական իմաստները որոնվում են բացառապես մշակութային տեքստերում, իսկ քաղաքական և տնտեսական ուղեգծերը մեկնաբանվում են ըստ պետության շահի սկզբունքի: Եվրոպական ժողովրդավարությունը և ազատ շուկան հաճախ դիմադրության են հանդիպում՝ պետության ինքնիշխանությունը կորցնելու, խորհրդային տարիներին անցած արդիականացման ընթացքն անտեսելու, անհեռատես ծրագրեր կազմելու և այլ մտավախություններով: Մշակույթը, քաղաքականությունն ու տնտեսությունը հաճախ քննարկվում են իբրև միասնական ու շաղկապված ոլորտներ: Երկրի տնտեսության և առհասարակ բոլոր բնագավառների համար քաղաքակրթական որակները սկսում են ընկալվել որպես գործնական կիրառության ռեսուրսներ: Հաճախ է շեշտվում քաղաքական ուղեգծերն այդ որակների լրջագույն ուսումնասիրությամբ կազմակերպելու անհրաժեշտությունը: Եվրոպան՝ մշակութային հեռանկար! ենթագլխում վերլուծել ենք մամուլում հայկական մշակույթի փաստարկը՝ որպես Հայաստանի եվրոպական կողմնորոշման հիմնավորում: Տարբեր հրապարակումներ շեշտում են Արևելյան և Եվրոպական քաղաքակրթությունների առանձին կողմերը՝ փորձելով մշակույթների տիպաբանական բնութագրերից սահուն կերպով բխեցնել հայկական մշակույթի առնչությունը դրանց հետ:

Ս.Հանթինգթոնի քաղաքակրթության մշակութային բնութագրերն ու տարբերություններնառավել կայուն են, քան քաղաքականն ու տնտեսականը36: Եվրոպան մամուլում հաճախներբերվում է իբրև մշակութային գաղափարաբանություն և առնչակցվում հայկականի հետ՝ որպես օրինակ և որպես սեփական կորսված ինքնության բնութագիր: Մամուլում տարածված միտում է, երբ շեշտվում են Արևելյան և Եվրոպական քաղաքակրթությունների առանձին կողմերը և փորձ է արվում մշակույթների տիպաբանական բնութագրերից սահուն կերպով բխեցնել հայկական մշակույթի առնչությունը դրանց հետ: Թեմայի ծավալումները բոլոր պարբերականներում առավելապես վերլուծական են, հաճախ գեղարվեստական: Մշակույթի թեման առանձնահատուկ է նաև նրանով, որ անգամ որևէ իրադարձության մասին, օրինակ, հաշվետվության ժանրով գրված նյութը հաճախ էական քաղաքակրթական շեշտադրումներ է պարունակում:

Եզրակացություն

2020 թվականի սեպտեմբերյան 44 օրյա պատերազմի և հետպատերազմյան զարգացումների ուսումնասիրությունը մեզ բերել է այն եզրակացության, որ առանձնակի խորությամբ պետք է ուսումնասիրենք մեր պատմությունը, մեր տեղն ու դերը արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների խաչմերուկում:Նման հնարավորությունն մեզ կարող է տալ նախագծային ուսուցման մեթոդը: Այս մեթոդով հատկապես ուումնասիրելենք հայոց արտաքին քաղաքական կողմնորոշման խնդիրը:Հայոց պետականության առաջ արտաքին քաղաքական կողմնորոշման խնդիրը դրվել է դեռևս դարեր առաջ՝ հայոց պետականության գոյության շրջաններում, երբ անընդհատ գտնվելով տարբեր քաղաքակրթությունների ու աշխարհակալ տերությունների բախման խաչմերուկում ու կարևոր ստրատեգիական դիրք զբաղեցնելով հյուսիսը հարավին ու արևելքն արևմուտքին կապող կետում՝ ստիպված է եղել հստակեցնել իր կողմնորոշումը դեպի այս կամ այն ուժային բևեռը: Արտաշեսյանների դինաստիայի և, մասնավորապես, Արտաշես I-ի ու Տիգրան Մեծի օրոք, սակայն, հայկական պետությունը, ունենալով զգալի պոտենցիալ ու ռազմաքաղաքական ազդեցություն տարածաշրջանում, ոչ միայն իր օրակարգում չուներ այս կամ այն տերությանը հարելով սեփական անվտանգությունն ապահովելու խնդիր, այլև ինքն էր հանդես գալիս աշխարհակալական նկրտումներով ու լուրջ խնդիրներ առաջացնում Արևելք ձգտող Հռոմի ու Պարսկաստանի հեգեմոնիայի հաստատման ճանապարհին: Արշակունիների օրոք արդեն, երբ 3-րդ դարի առաջին կեսից Սասանյան Պարսկաստանը ամեն կերպ ձգտում էր հպատակեցնել հայոց թագավորությունը, որտեղ իշխում էր հայկական ժառանգական դինաստիայի վերածված Սասանյանների հակառակորդ պարթև Արշակունիների մի ճյուղը, Հայաստանը ստիպված էր հայացքն ուղղել դեպի արևմուտք՝ Հռոմ, որը կարող էր այդ ժամանակ միակ դաշնակիցը լինել ընդդեմ պարսկական վտանգի: Նպատակ ունենալով սույն պատմական անդրադարձով ներկայացնել հնում հայոց պետության արտաքին կողմնորոշման որոշ կարևոր ասպեկտներ՝ հարկ ենք համարում նշել, որ կախված տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակից ու հայկական պետության հզորությունից՝ այն տարբեր դրսևորումներ է ունեցել: Ավելին, դրանում հաճախ քաղաքակրթական համապատասխանությունը երկրորդական դեր

է խաղացել, քանի որ կենսական խնդիր հայոց պետության համար եղել է անկախության պահպանումը, իսկ որպես արտաքին դաշնակիցներ կարող էին հանդես գալ նաև կրոնական, մշակութային քիչ ընդհանրություններ ունեցող երկրները, երբ, դիցուք, քրիստոնյա Հռոմն ու ավելի ուշ՝ Բագրատունիների շրջանում Բյուզանդական կայսրությունը փորձում էին վերացնել հայոց պետականությունը: Այսինքն՝ աշխարհաքաղաքական իրադրությունն ու պետությունների նվաճողական նկրտումները ստիպում էին համագործակցել այն ուժերի հետ, որոնք կարող են ռազմաքաղաքական աջակցություն ցուցաբերել, իսկ քաղաքակրթական ընդհանրությունները կրոնի, մշակույթի և մյուս գործոնների առումով այդքան էլ չէին սահմանում պետությունների արտաքին քաղաքական օրակարգերը: Ուստի կարող ենք եզրակացնել, որ հնում փոքր պետությունները, որոնց համար կենսական են եղել պետականության պահպանման խնդիրները, ձգտել են արտաքին հարաբերություններում կողմնորոշվել ոչ այնքան քաղաքակրթական ընդհանրություններով ու նախընտրություններով, այլ առկա այլընտրանքներով:

Օգտագործված գրականության ցանկ

Հ. Ա. Գևորգյան, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2005, էջ 71:

Ռաֆֆի Հովհաննիսյանի ելույթը Եվրոպական խորհրդի Ստամբուլի հանդիպման ընթացքում.10 սպտեմբերի, 1992թ., Ազգ, 20 հոկտեմբերի, 1992:

Մ. Փոլադյան, Խոսքի վերադարձը (Լեզվաբանություն և ոճագիտություն), Երևան, Նաիրի, 1999, էջ

Մ. Դաբաղ, Հայկ. հիշ. Եվր. հիշողական քաղաքականության համատեքստում, Հայաստանը Եվր.

ճան., Ինքնություն, Երևան, 2005, էջ 300:

http://councils.ysu.am/pdf_files/012/2015/012-Mariam-seghmagir.pdf

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2480&sphrase_id=63986